

## ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

### ԵՎԳԵՆԻԱ ԱՐԻՍՏԱՎԵՍԻ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ (1904 - 1985 թթ.)

Եվգենիա Արիստավեսի Միրզախանյանը ծնվել է 1904 թ. նոյեմբերի 7-ին Թիֆլիսիում: Նախ սովորել է տեղի Յովնանյան դպրոցում, որտեղ նրան դասավանդել են ժամանակի հայ մշակույթի նշանավոր գործիչներ Դ. Դեմիրճյանը, Մ. Եկմայանը, Յ. Սուրխաթյանը և ուրիշներ: Դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ-ի պատմաբանասիրական ֆակուլտետը, որն ավարտելուց հետո աշխատել է տարբեր դպրոցներում որպես պատմության ուսուցիչ, եղել է ուսմասվար: Հետագայում ընդունվել է ԵՊՀ-ի ասպիրանտուրա՝ մասնագիտանալով հին աշխարհի պատմության ասպարեզում: Նրա թեկնածուական ատենախոսության թեման եղել է «Տիբերիոսի պրինցիպատը» (գիտական ղեկավարն էր ՀԽՍՀ գիտ. վաստակավոր գործիչ, դոցենտ, «Հին աշխարհի պատմության» ամբիոնի վարիչ Ս. Ս. Ներսիսյանը (1892-1965 թթ.):



Չնայած այն հանգամանքին, որ Ե. Միրզախանյանի գիտական ժառանգությունը թվաքանակով մեծ չէ, բայց գիտական առումով նշանակալի է: Այդ ժառանգությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ գիտական հոդվածներ, որոնք հիմնականում առնչվում են անտիկ դարաշրջանի ապստամբական շարժումներին ու ընդվզումներին, և ուսումնամեթոդական աշխատություններ: Վերջիններս ունեին մեծ կարևորություն, քանզի մինչ այդ հանրապետությունում համարյա բացակայում էին հին աշխարհի պատմությանը վերաբերող մեթոդական գործերը:

Նախ անդրադառնանք Միրզախանյանի թեկնածուական ատենախոսության գիտական գնահատման հարցին: Ընդհանրապես, որպես չգրված օրենք, թեկնածուական ատենախոսություններն ընդգրկում են պատմական ավելի մեծ և ծավալուն ժամանակային հատվածներ: Ե. Միրզախանյանի դեպքում կարելի է արձանագրել հետևյալը: Խորապես համոզված լինելով, որ անսահմանափակ են նրա ընդունակություններն ու մտքի «թռիչքը», հանձնարարել էին զբաղվել չափից ավելի կարճ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետազոտմամբ (Զ.հ. 14-37 թթ.): Դրան պետք է ավելացնել մեկ կարևոր հանգամանք ևս: Համաշխարհային պատմագիտության մեջ ինչպես խորհրդային տարածաշրջանում, այնպես էլ արև-

մուտքում Տիբերիոսի պրինցիպատի դարաշրջանը համարյա ուսումնասիրված չէր, կրում էր մակերեսային բնույթ: Պետք է առանձնացնել միայն մի քանի հետազոտողների՝ Մ.Պ. Դրագոմանովի, Գ. Մերչինգի, Վ. Ս. Մերգենի, Ի. Դ. Ամուսինի, իսկ արևմտյան հետազոտողներից՝ Ֆ. Բ. Մարշի, Ջ. Ս. Տարվերի և Չ. Ե. Սմիթի անունները<sup>1</sup>: Փաստորեն գրված լուրջ աշխատությունների և հոդվածների թիվը չէր հասնում նույնիսկ մեկ տասնյակի: Չպետք է նաև մոռանալ, որ վերոհիշյալ աշխատություններում ժամանակավորապես իր պետականությունը կորցրած Հայաստանի պատմության ուսումնասիրությունը լավագույն դեպքում ուներ միայն ակնարկային բնույթ: Միրզախանյանը առաջինն էր հայ պատմագիտության մեջ, որ կարողացավ վերլուծել և գնահատել Տիբերիոսի ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցած ելևէջները, քանզի որպես անհատ ուներ խիստ հակասական բնավորություն: Ատենախոսությունն ուներ աղբյուրագիտական ուղղվածություն: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրել էր այդ ժամանակներին նվիրված աշխատություններից ամենակարևորն ու լավագույնը՝ Կոնսելիոս Տակիտոսի «Տարեգրությունները», որ վերաբերում էր Զ.հ. 14-68 թվականներին: Բնականաբար, հետին պլանի վրա էր գտնվում Գայոս Սվետոնիոսի «Տասներկու կեսարների կյանքը» սկզբնաղբյուրը: Հետագա գիտական ուսումնասիրություններում Ե. Միրզախանյանը հատկապես կարևոր տեղ էր հատկացնելու Կ. Տակիտոսին, որը փաստորեն դառնալու էր նրա «անբաժանելի» ուղեկիցներից մեկը:

Վերջինիս լավագույն ապացույցներից է նրա «Սոցիալական պայքարը և ազատագրական շարժումները վաղ պրինցիպատի դարաշրջանում» ստվարածավալ հոդվածի հրապարակումը<sup>2</sup>: Այստեղ Տակիտոսից զատ նա հանգամանորեն ուսումնասիրել է այդ դարաշրջանի իրադարձություններին վերաբերող Հռոմի առաջին կայսր Օգոստոսի (Զ.ա. 27 - Զ.հ. 14 թթ.) կտակը, որը գիտական շրջաններին առավել հայտնի է «Աստվածային Օգոստոսի գործք» (լատ. բնագրով՝ «Res gestae Divi Augusti» անվամբ): Ընդհանուր առմամբ այս հոդվածը որոշակիորեն ուներ աղբյուրագիտական ուղղվածություն, որը բնորոշ էր նրա մյուս բոլոր գիտական պրպտումներին: Մյուս կարևոր յուրահատկություններից էր նաև այն, որ Ե. Միրզախանյանը կարևոր տեղ էր հատկացնում հին աշխարհում տեղի ունեցած սոցիալական շարժումների բնարկմանը: Դրանք նախկինում ևս ուսումնասիրվել էին արևմտյան ու ցարական Ռուսաստանի նշանավոր հետազոտողների կողմից (Գ. Բուասե, Գ. Գլոտց, Ռ. Պյոլման, Թ. Սոմմզեն, Լ. Օսո և ուրիշներ), բայց լիովին այլ լույսի ներքո: Առաջիններից մեկը խորհրդային և հայ պատմագրության մեջ Ե. Միրզախանյանն էր, որ հատուկ ուշադրություն դարձրեց այս խնդիրներին, որոնք ունեին քաղաքական խոր արմատներ ու դրդապատճառներ: Հետագայում այս հարցերին անդրադարձավ նաև մեր մյուս նշանավոր երախտավորներից մեկը՝ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը<sup>3</sup>: Մեկ ու կես տասնամյակ

<sup>1</sup> Տե՛ս Մ.Պ. Драгоманов, Император Тиберий, Варшавское университетское известие, Варшава, 1864, N 1-2; Г. Мерчинг, Император Тиберий. Историческое исследование, Варшавское университетское известие, 1881, N 2, 3, 4; В.С. Сергеев, Принципат Тиберия, ВДИ, 1940 N 2, էջ 83-94; И.Д. Амусин, К эдикту Тиберия Юлия, ВДИ, 1949, N 2, էջ 221-227; F.B. Marsh. The reign of Tiberius, Oxford, 1931; J.C. Tarver, Tibère le tyran, Paris, 1934; Ch.E. Smith, Tiberius and the Roman empire, Louisiane, Baton Rouge, 1942.

<sup>2</sup> Տե՛ս Ե. Ա. Միրզախանյան, Սոցիալական պայքարը և ազատագրական շարժումները վաղ պրինցիպատի դարաշրջանում, ԵՊՀ, Գիտ. աշխ. ժողովածու, հ. 62, Պատմ. գիտ. սերիա N 3, Եր., 1958, էջ 229-255:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Եր., 1962:

անց նա հրատարակեց իր չափից ավելի ուշագրավ հոդվածներից մեկը՝ «Ժողովրդա-ազատագրական պայքարը հին Եգիպտոսում (II դար). Բուկոլոսներ» հոդվածը<sup>1</sup>: Ինչով է ուշագրավ այն: Չայկական, ռուսական և արևմտյան պատմագրության մեջ այս հարցին՝ բուկոլոսների պատմությանը վերաբերող առաջին *միակ* (ընդգծումը մերն է – Է.Մ, Յ.Յ.) գործն է: Այս պատճառով էլ ունի բացառապես աղբյուրագիտական նշանակություն և հիմնականում շարադրված է Օբսիդիևսոյան պապիրուսներում պահպանված վկայությունների տվյալների հիման վրա: Առաջին պապիրուսներն այստեղ սկսել են «հրատարակել» հռոմեացիների՝ Եգիպտոսում հայտնվելուց անմիջապես հետո: Այդ ավանդույթը պահպանվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև Զ.հ. V-VI դդ. ընկած ժամանակահատվածը:

Հռոմեական կայսրության արևելյան քաղաքականությունը Զ.հ. II դարում ստացավ չափից ավելի ասնճարձակ բնույթ, մասնավոր Տրայանոս (98-117 թթ.) և Մարկոս Ավրելիոս (161-180 թթ.) կայսրերի գահակալության տարիներին: Անհանգիստ էր ամենուր, այդ թվում ոչ միայն Եգիպտոսում, այլև Արշակունյաց Չայաստանում: Եգիպտոսում տեղի ունեցող իրադարձությունները նկատի ունենալով՝ հեղինակը փորձել է ցույց տալ Չայաստանում՝ հակահռոմեական ընդվզումների բուն պատճառներն ու նպատակները: Որպեսզի մեկնաբանումները չստանան միակողմանի և մերկապարանոց բնույթ, նա օգտագործել է նաև հունա-հռոմեական մատենագիրների գործերում բուկոլոսների մասին պահպանված սուղ և կցկտուր վկայությունները (խոսքը վերաբերում է Տակիտոսին, Սվետոնիոսին, Յելիոդորոսին, Աբիլես Տացիոսին): Հոդվածում կարևոր տեղ է գրավում դասային փոխհարաբերությունների խնդրի վերլուծությունը բուն տեղաբնիկների միջև: Սա մի կողմից, իսկ հակառակ եզրից ուսումնասիրվում է պրովինցիալ Եգիպտոսում փոխհարաբերություններն ու առնչությունները եգիպտական հասարակության վերնախավի ու նվաճող հռոմեացիների միջև՝ սկսած վերջիններիս այստեղ հայտնվելու օրերից: Ժամանակի ընթացքում տեղի ունեցավ այս երկուսի սերտաճում, միահյուսում, քանզի տեղի ազնվականությունն իր ունեցվածքը զնահատեց ավելի թանկ, քան սեփական պետության և ժողովրդի անկախությունը: Հեղինակի կողմից, ճիշտ է, զուգահեռներ չեն անցկացվում Չայաստանում կատարված հակահռոմեական իրադարձությունների հետ, բայց նա ցանկանում է ապացուցել, թե որքան ավելի պարկեշտ ու առաքինի էին մեր ազնվականության ներկայացուցիչները:

1971 թ. նշանավոր պատմաբան և թարգմանիչ Ս. Մ. Կրկյաշարյանը բնագրից թարգմանեց Զսենոփոնի «Անաբասիսը», որը ամբողջապես հայերեն թարգմանված առաջին ստեղծագործություններից մեկն էր: Այս մեծ գործին անմիջապես արձագանքողներից էր նաև Ե. Միրզախանյանը, որը հանդես եկավ ծավալուն գրախոսությամբ: Նա տվեց ոչ միայն անտիկ այս մատենագրի անմահ աշխատության գիտական գնահատականը, որպես VI-IV դդ. հին Չայաստանի (կամ Երվանդականների) քաղաքական, սոցիալ-տնտեսական, որոշ առումով նաև մշակութային զարգացումների

<sup>1</sup> Տե՛ս Ե.Ա. Միրզախանյան, Ժողովրդա-ազատագրական պայքարը հին Եգիպտոսում (II դար). Բուկոլոսներ, Երևանի համալսարան, 1973 N 2 (16), էջ 33-37: Բուկոլոս բառն ունի հին հունական ծագում և նշանակում է հովիվ - bukolos (βούκος): Այս բառից է ծագել նաև գրական ժանրերից մեկի անվանումը, որ կոչվում է հովվերգություն կամ բուկոլիստիկա: Այս ժանրի հիմնադիրն է համարվում Զ.ա. III դ. բանաստեղծ Թեոկրիտեսը: Հովվերգությունը գեղարվեստական գրականության մեջ գոյատևել է մինչև XVIII դ.:

կարևոր սկզբնաղբյուր, այլև ըստ արժանվույն արժևորեց թարգմանչի տիտանական գործը: Գրախոսը նշում էր. «Զսենոփոնի «Անաբասիսի» ներկա հայերեն թարգմանությունը կատարվել է հունաբան Ս. Կրկյաշարյանի կողմից, որին հաջողվել է հմտորեն վերարտադրել Զսենոփոնի բովանդակային աշխատությունը՝ ոճական իր բոլոր նրբերանգներով: «Անաբասիսի» հայերեն թարգմանությունն, անշուշտ, կարևոր ներդրում է հայագիտական թարգմանական գրականության գանձարանում»<sup>1</sup>:

Այժմ մենք անդրադառնանք Ե. Միրզախանյանի ուսումնա-մեթոդական աշխատությունների գնահատմանը, որը ևս ծանրակշիռ տեղ է զբաղեցնում նրա գիտական պրպտումների ասպարեզում: Չնայած պատմության ֆակուլտետը գոյություն ունեւ համալսարանի հիմնդրման առաջին օրից, բայց միշտ էլ զգացվել է հայալեզու դասագրքերի պակաս, հատկապես համաշխարհային պատմության առարկաների բնագավառում: Ելնելով դրանից՝ Ե. Միրզախանյանը ձեռնամուխ եղավ «Հին Հռոմի պատմության» սովորածավալ դասագրքի թարգմանությանը (հայերեն թարգմանությունը կազմում է 1001 էջ), որի հեղինակն էր պրոֆ. Ն.Ա. Մաշկինը<sup>2</sup>: Սա փաստորեն համաշխարհային պատմության գծով հայերեն թարգմանված առաջին դասագրքերից էր, որն այսօր էլ հանդիսանում է մեր հանրապետության տարբեր բուհերում պատմություն ուսումնասիրող ուսանողության հիմնական դասագրքերից մեկը: Այլ կերպ, արդեն անցել են 60-ից ավելի տարիներ, բայց դասագիրքը բնավ չի կորցրել իր այժմեականությունը: Սա միաժամանակ վկայում է կատարված թարգմանության չափից ավելի արհեստավարժության մասին: Գրքի ամենասկզբում զետեղված է Ն. Մաշկինի առաջաբանը, որը մեծ ոգևորությամբ է ընդունում ոչ միայն այս թարգմանության իրականացումը, այլև գովեստի խոսքեր է հղում մեր ժողովրդին՝ Հայաստանն անվանելով. «...մեր Միության հնագույն երկրներից մեկը»<sup>3</sup>:

Թեկնածուական ատենախոսությունից հետո Ե. Միրզախանյանի կողմից գրված երկրորդ ծավալուն գործը «Ուրվագծեր հին Հունաստանի պատմության» աշխատությունն էր<sup>4</sup>: Այս ձեռնարկը բովանդակային առումով բաժանվում է երկու մասի: Առաջին բաժնում հեղինակը գիտական վերլուծության է ենթարկել հույն մատենագիրների աշխատությունները: Այն սկսվում է պատմության, որպես գիտության սկզբնավորման ժամանակաշրջանից (առաջին մատենագիրներին անվանում են լոգոգրաֆներ) ու հասցնում է մինչև Արրիանոս Ֆլավիոսի ապրած օրերը (Ք.հ. I-II դդ.): Ուսումնասիրողի կողմից տրված են պատմագիտության մեջ լոգոգրաֆների իրականացրած հեղաշրջման գնահատականը և այն հանգամանքները, որոնց շնորհիվ հենց Հունիա մարզը, որ գտնվում էր Փ. Ասիայի Էգեյան ծովափին, դարձավ պատմագիտության ծննդավայր: Լոգոգրաֆներին հաջորդում են բուն մատենագիրները՝ սկսած Հերոդոտոսից, ապա Թուկիդիդեսը, Զսենոփոնը, Կեղծ Զսենոփոնը, Պլատոնը, Արիստոտելը, Պոլիբիոսը, Դիոդորոսը, Պլուտարքոսը, Ստրաբոնը և, ինչպես նշվեց վերևում, Արրիանոսը:

<sup>1</sup> Ե.Ա. Միրզախանյան, Զսենոփոնի «Անաբասիսը», Երևանի համալսարան, 1971, N 11, էջ 56:

<sup>2</sup> Տե՛ս Ն.Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Եր., 1951: Թարգմանության խմբագիրն էր մեր մյուս նշանավոր երախտավորներից մեկը՝ Ս.Ս. Ներսիսյանը:

<sup>3</sup> Այս առաջաբանը գրվել է 1949թ. դեկտեմբերի 6-ին, իսկ գիրքը տպագրվել է, ինչպես նշվեց վերևում 1951թ:

<sup>4</sup> Ե.Ա. Միրզախանյան, Ուրվագծեր հին Հունաստանի պատմության: Ուսումնական ձեռնարկ, Եր., 1967:

Այստեղ կարևորը այն է, որ հեղինակը աշխատել է, որքան հնարավոր է, հատուկ ուշադրություն դարձնել վերոհիշյալ մատենագիրների հատկապես այն վկայություններին, որ վերաբերում են Յայաստանին:

Չափազանց հետաքրքիր է նաև աշխատության երկրորդ բաժինը, որն ամբողջովին վերաբերում է հին Յուստաստանի պատմության ուսումնասիրության պատմագրությանը: Այստեղ վերլուծությունն սկսվում է Վերածննդի ժամանակաշրջանից (XIV դ.), երբ հանդես եկան անտիկ պատմության առաջին տեսաբանները՝ Սկալիզերը, Ջ. Վիկոն, ապա ավելի ուշ՝ Բենալեյինը, Յ. Վինկելմանը, Ֆ.Ա. Վոլֆը, Գ.Բ. Նիբուռը (կամ Նիբհուռը), Ա. Բյոկը և ուրիշներ: Առանձին ուսումնասիրված է նաև հին Յուստաստանի պատմագրության ասպարեզում արևմտաեվրոպական ուսումնասիրողների կողմից XIX դ. և XX-ի սկզբներին իրականացրած ձեռքբերումների նշանակությունը: Այս ժամակահատվածում ևս հանդես եկան մի շարք նշանավոր ուսումնասիրողներ, որոնց միասին վերցրած կարելի է անվանել համաստեղություն: Դրանցից էին Ա. Վալլոնը, Է. Կուրցիուսը, Ա. Էվանսը և ուրիշներ, որ դրեցին հին Յուստաստանի պատմության ուսումնասիրության այն հիմքերը, որի վրա էլ առ այսօր ծավալվում և զարգանում է վերնաշենքը: Այստեղ հատուկ տեղ է հատկացված հին Յուստաստանի պատմության ռուսաստանյան նախախորհրդային դպրոցի ձեռքբերումների գնահատմանը: Տրվում է ինչպես XIX դ. Դրիմի թերակղզու տարածքում հնագիտական պեղումների ձեռքբերումների արդյունքների, այնպես էլ մի շարք ուսումնասիրողների (Մ. Ս. Կուտորգա, Ֆ. Ֆ. Սոկոլով, Ֆ. Ֆ. Միշչենկո, Վ. Գ. Վասիլևսկի, Մ. Մ. Խվոստով, Վ. Պ. Բուզեսկուլ, Ռ. Յու. Վիպպեր, Մ.Ի. Ռոստովցև) կատարած աշխատանքների գնահատականը:

Աշխատության վերջնամասը վերաբերում է խորհրդային պատմագրությանը, որի ակունքներում էին կանգնած համաշխարհային պատմագրության մի շարք նշանավոր դեմքեր՝ Ա. Ի. Տյունենևը, Վ. Ս. Սերգեևը, Ս. Ի. Կովալյովը, Ս. Յու. Լուրյեն, Ա. Բ. Ռանովիչը:

Նույն սկզբունքով է գրված Ե. Միրզախանյանի նաև երկրորդ աշխատությունը, որը վերաբերում է հին Հռոմի պատմությանը<sup>1</sup>: Հեղինակը հատկապես առանձնահատուկ ուշադրություն է դարձրել կայսրության դարաշրջանի հռոմեական մատենագիրների աշխատանքների վերլուծությանը: Այս շրջանի մատենագիրներ Լիվիոսը, Տակիտոսը և մյուսները իրենց գործերում մեծապես անդրադարձել են Արշակունյաց Յայաստանին, ուստի և Ե. Միրզախանյանը հատուկ քննարկման առկա է դարձրել այդ տեղեկությունների հավաստիության աստիճանը և պատմագիտական նշանակությունը: Ձեռնարկի երկրորդ բաժնում տրված է հռոմեական պատմագրության պատմությունը Վերածննդից և Ֆ. Կլոպերի ժամանակներից սկսած, որ ստեղծագործել է XVII դարում և հասցվում է մինչև 1950-60-ական թթ. ընկած ժամանակահատվածը:

Երկու ձեռնարկ-ուսումնասիրություններն էլ առաջին փորձերից էին մեզանում համաշխարհային պատմության բնագավառում: Դրանք այնքան հաջողված էին, որ այսօր էլ լայնորեն օգտագործվում են ոչ միայն ուսանողության, այլև մասնագետների կողմից:

<sup>1</sup> Ե.Ա. Միրզախանյան, Ուրվագծեր հռոմեական պատմագրության: 520

Ե. Միրզախանյանը աշխատանքային գործունեության ողջ ընթացքում իր գլխավոր խնդիրն էր համարում երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակելը: Նրա գիտական ժառանգությունը, հատկապես ուսումնա-մեթոդական աշխատությունները այսօր էլ օգտագործվում են ուսանող-պատմաբանների կողմից:

Ե. Միրզախանյանը Երևանի պետական համալսարանում շարունակել է դասավանդել մինչև 1974 թվականը: Վախճանվել է 1985 թ. օգոստոսին Երևանում:

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ  
**ՅԱԿՈՒ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**